

րապատում ուսումնասիրութեան, երբ կրնար աւելի ընդհանուր փնտռուած եւ ընդունելի նիւթերով լեցնել իր էջերը:

Իմ շնորհակալութիւնս պարզապէս հեղինակի մը շնորհակալութիւնը թող չսեպուի, այլ հայու մը, ազգասէր հայու մը, եթէ կը ներէք, երախտագիտութիւնը, որովհետեւ սուղ ճարուած նիւթահան միջոցներ կը գործածուին մեր ցեղին մոռցուած այլ ԻՐԱԿԱՆ պատմութեան տուեալները մատչելի ընելու: Ասիկա երեւոյթ մըն է մեր մօտ հաղուագիւտ եւ նոյն ատեն չգնահատուած, սակայն խիստ գովելի երեւոյթ մը:

(Վ Ե ՐՁ)

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Հանուէյ մեզի թողուցած է խիստ շահեկան գրութիւն մը, որ իր ամբողջութեան մէջ կը թարգմանեմ հոս:

Խորագիրն է.—

«Հիւսիսային Պարսկական գաւառներուն մէջ արտադրուած որակի եւ քանակի մասին հաշուետուութիւն մը: Շերամ ապարկելու կերպը եւ Գիլանի մէջ մետաքս գնելը»:

* * *

«Անտարակոյս բազմաթիւ հաշուետուութիւններ կան հում մետաքսի մասին, բուն երեւումէն մինչեւ հիւսուելը, եւ իմ տալ կըրցածէս շատ աւելի դերագանց: Սակայն, կը խորհիմ թէ անյարմար չպիտի ըլլայ յիշել իմ գիտցածս՝ Պարսկաստանի մէջ իմ բնակութեանս առթիւ ըրած մասնայատուկ նկատողութեանցս հետ միասին: Ռէչտի մաքսատան վճարուած մաքսերէն դատելով, առեւտուրը հոն ծագկիլ սկսաւ մեր հոն հասնելէն յետոյ, որովհետեւ 1742-ին մաքսերը հաւասար էին միայն 20,000 գրաունի, իսկ 1743-ին անոնք բարձրացան 50,000 գրաունի, մօտաւորապէս նոյնքան ալ 1744-ին:

«Գիլանի մետաքսի արտադրութիւնը լաւ ժամանակներուն, ըստ իս, 30,000 պաթման էր, (հաւասար 240,000 մեծ կամ 24 աունանոց փառնաթի, որ գումարն էր Ռիզա Ղուլի իշխանին ունեցած մենաշնորհին: Ասկէ աւելի ալ

հաշուուած է, սակայն նոյնիսկ այս գումարը կ'անցնի 1743, 1744 եւայլնի բուն քանակը), որուն վեց հազարին մօտ կը սպառի Պարսկաստանի մէջ, չորս հազարը կը զրկուի Պաղտատ, իսկ մնացեալը կասպից ծովուն վարայով՝ Եւրոպա: Նախապէս Շիրվանն ալ մեծ քանակութեամբ մետաքս կ'արտադրէր, բայց այդ գաւառը Գիլանէն աւելի վատ վիճակի մէջ է: Այս ապրանքը շուկայ կը բերուի ամբողջ տարուայ ընթացքին, մեծ կամ փոքր քանակութեամբ, սակայն գլխաւորաբար Օդոստոսին եւ Սեպտեմբերին: (Մետաքսը) քանի մը տեսակ ունի: Առաջինը Շէրպաֆ կոչուածն է, կամ ջուլհակի մետաքս, որովհետեւ ջուլհակները՝ մասնաւորաբար Ռէչտ եւ Քէշան իբր թէ կը նախընտրեն լաւագոյնը, որ կրնան ձեռք անցընել: Սակայն, իրապէս ընդհանուր առմամբ, ինչ որ կը գործածուի Քէշանի Պարսկական հիւսուածեղէններուն մէջ, նրբագոյն մետաքսն է, որուն թելերը աւելի կտրտուած կ'ըլլան: Ասիկա (չէրպաֆը) բոլորովին ճերմակ կ'ըլլայ, մինչ միւսը ճերմակ եւ դեղին է, եւ ոչ այնպէս կարճ փաթաթուած, թէ եւ շատ նուրբ, սակայն ոչ չէրպաֆին չափ գնահատուած: Տեսակ մ'ալ կայ, որ Արապս (արապական) կը կոչուի, մեծ մասամբ արաբներու կողմէ բերուելուն համար: Ասիկա Թուրքիա կը զրկուի, ուր յետոյ արտադրութեանց մէջ կը գործածուի: 1)

«Գիլանի կ'արտադրէ լաւագոյն եւ մեծագոյն քանակութեամբ մետաքսը: Անկէ վերջ կուգան Շիրվանն եւ Երեւանը, յետոյ Մաղանտէրանը իսկ յետոյ Ասդրապատը, որմէ վերջինս անհամեմատօրէն ստորին է եւ կը գործածուի միայն բամպակախառն արտադրութեանց մէջ: Ասկէ ոմանք կը շինեն իրենց չապիկներն ու վարտիքները: Գիլանի մետաքսը կը զրկուի Թուրքիա եւ Ռուսիա: Մաս մ'ալ

1) Մետաքսի տեսակներու մասին 1700-ին Ֆրանսացի ուղեգիր Tournafort կը գրէ — «Պարսկական Շորպասի մետաքսը լաւագոյնն է, եւ Արտաշի կշտագոյնն է»: (A Voyage into the Levant 1692-1702: Անգլ. թարգ. 1741, Լոնտոն, Գ. հատոր, էջ 99):